18.10.2022
350-70

ՀՀ Առողջապահության նախարար
Անահիտ Ավանեսյանին

# Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Ավանեսյան,

2022 թվականի հոկտեմբերի 18-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել Ալբերտ Ավետիսյանը՝ խնդրելով օգնել տեղեկություն ստանալու հարցում:

Սույն թվականի հուլիսի 13-ին ՀՀ քաղաքացի Ալբերտ Ավետիսյանը տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել Առողջապահության նախարարությանը (հարցումը կցվում է)՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2020 թվականի 44-օրյա պատերազմի մասնակիցների առողջապահական խնդիրների լուծման գործընթացի ֆինանսավորման պայմանների մասին տեղեկություններ:
2. Կա՞ն բժշկական հաստատություններ, որոնք ցուցաբերում են ֆինանսական օգնություն 2020 թվականի 44-օրյա պատերազմի մասնակիցներին հետազոտման համար: Եթե կան այդպիսիք, խնդրում եմ նշել ցանկը:
3. Խնդրում եմ ինձ տրամադրել Առողջապահության նախարարի հրամանները կապված 2020 թվականի 44-օրյա պատերազմի մասնակիցների բուժզննումների և առողջապահական օգնության վերաբերյալ:

2022 թվականի հուլիսի 27-ին Առողջապահության նախարարությունը պատասխանել է քաղաքացու հարցմանը՝ նշելով պատասխանի հետաձգման անհարժեշտության մասին (պաշտոնական պատասխանը կցվում է): Անցել է 56 աշխատանքային օր, սակայն քաղաքացին մինչ օրս պատասխան չի ստացել:

Հաշվի առնելով այս հանգամանքը, միաժամանակ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք ***5-օրյա ժամկետում*** տրամադրել պահանջվող տեղեկությունները:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը ***պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով:***

**Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)**
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան